



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ [syunik@mta.gov.am](mailto:syunik@mta.gov.am)

## Որոշում

“ 21 ” Հունվարի 2015թ.

№ 5-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 - Ի N 183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Վարդան Դավթյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ նշանակելու մասին» N 1255-Ա որոշման, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում գեներալիին հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 183-Ա որոշման N2 հավելվածում «Աշոտ Մարոյան», «Նաիրա Ավանեսյան», «Արփինե Քարամյան» բառերը համապատասխանաբար փոխարինել «Վարդան Դավթյան», «Հովիկ Ալեքսանյան», «Աննա Ոսկանյան» բառերով:
2. N2 հավելվածի «Արմինե Հակոբյան Կապանի ֆերմերների ասոցացիա» ՀԿ տնօրեն բառերից հետո լրացնել «Նելլի Մելքումյան Ագարակ քաղաքային համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետ» բառերով:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ»  Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2015թ. հունվարի 21  
Ք. Կապան

Կազմը

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում գեներալային հարցերով զբաղվող  
մշտական հանձնաժողովի

Վարդան Դավթյան	ՀՀ Սյունիքի փոխմարզպետ /հանձնաժողովի նախագահ/
Հովիկ Ալեքսանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Սեյրան Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀԾ գործունեության համակարգման վարչության պետ
Կառլեն Կոզմանով	ՀՀ Սյունիք մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Աննա Ոսկանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց,երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ /հանձնաժողովի քարտուղար/
Արամ Շահնազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ,սոցիալական ապահովության բաժնի պետ
Ռուզաննա Տոռոզյան	«Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ տնօրեն /համաձայնությամբ/
Սրբուհի Գրիգորյան	Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու անդամ /համաձայնությամբ/
Արմինե Հակոբյան	«Կապանի ֆերմերների ասոցացիա» ՀԿ տնօրեն /համաձայնությամբ/
Նելլի Մելքոնյան	Ազարակ քաղաքային համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետ /համաձայնությամբ/

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան